

Արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր

- Անձնագիր (բնօրինակը), Տեղեկանք 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ կամ մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ լինելու մասին (բնօրինակը):
- Անձնագիր և ծննդյան վկայական (բնօրինակը), Առանց ծնողական խնամքի մնալու (մինչև 23 տարեկան) մասին հավաստող փաստաթղթեր (բնօրինակը):
- Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունենալու մասին հաստատող փաստաթուղթ (բնօրինակը),
- Զինծառայողի զոհվելու մասին տեղեկանք (բնօրինակը)՝ զոհված (մահացած) զինծառայողի ծնող, ամուսին (կին), մինչև 27 տարեկան զավակ լինելու դեպքում, մահվան վկայական (բնօրինակը), Դիմորդի ծննդյան վկայականը (բնօրինակը),
- Ինչպես նաև տեղեկանք՝ զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող լինելու մասին:
- Զինվորական գրքույկ (մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և եթե վերջին մեկ տարում է դիմորդը զորացրվել) (բնօրինակի բոլոր այն էջերը, որտեղ գրառումներ կան):